Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Փ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 հուլիսի 2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Կ. Սարգսյանը, Ք. Մարտիրոսյանը,
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի ջրամբարային հիդրոհանգույցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Փ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2026 թվականի հուլիսի 2-ին, ժամը 16:00-ին (հրապարակվել է 25.06.2026թ.-ին):

Հրավերում կատարված փոփոխություններ

ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Փ ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Փ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Ղազարյան Շին» ՍՊԸ	ք.Երևան, Ազատության 24/12,401 094 491111	ghazaryanshin@yandex.ru
«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ	ք. Գյումրի, Շիրակացի փ.83 շ., բն.40 041 822822	arxitects@mail.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 728 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի ջրամբարային հիդրոհանգույցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության ծառայություններ				
1	«Ղազարյան Շին» ՍՊԸ	545 000	0	545 000
2	«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ	580 000	116 000	696 000

Մասնակցի(ների) կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակից «Ղազարյան Շին» ՍՊԸ-ի հայտով ներկայացված Դիմում հայտարարության մեջ (Հավելված 1) իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ակտիվ չէ, միաժամանակ «Ղազարյան Շին» ՍՊԸ-ի քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության լիցենզիայի դասը չի համապատասխանում ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Փ ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.4.1 կետով սահմանված՝ Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (ծածկագիր՝ 02) լիցենզիա՝ «հիդրոտեխնիկական կառուցվածքներ (հիդրոտեխնիկական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ)» ներդիրով (ներդիրի ծածկագիրը՝ 07) լիցենզիայի առնվազն 1-ին դաս, պահանջներին:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Համաձայն ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Փ ծածկագրով հրավերի 8.9 կետի, մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակից **«Ղազարյան Շին» ՍՊԸ-ին՝** մինչև կասեցման ժամկետի ավարտը **(16.07.2026թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ _____ Է. Բաղալյան

անդամներ _____ Կ. Ալեյան

_____ Կ. Սարգսյան

_____ Ք. Մարտիրոսյան

Քարտուղար _____ Ս. Գալստյան